



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱՔ

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու խորհուրդը, հովանաւորութեամբ եւ առաջնորդութեամբ Հայ Առաքելական, Ասորի Ուղղափառ եւ Ղրպտի Ուղղափառ Եկեղեցիներուն, տարուան ընթացքին միատեղ պատարագ, եկեղեցական արարողութիւններ, եկեղեցականաց հաւաքներ, երիտասարդաց թէ աշակերտական աշխատանքային հանդիպումներ կը կազմակերպէ:

Միջ-թեմական կիրակնօրեայ վարժարաններու կազմակերպիչ յանձնախումբին նախաձեռնութեամբ, ու հովանաւորութեամբ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդ Սրբազան Հայրերուն, Շաբաթ, 21 Նոյեմբեր 2009ին, տեղի ունեցաւ միջ-կիրակնօրեայ վարժարաններու աշակերտական 6-րդ միօրեայ դաստիարակչական ծրագրով տարեկան հաւաքը, Պըրպէնքի Ս. Եփրեմ Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 9:30-էն յետմիջօրէ ժամը 2:30:

Առաջին հերթին, Ս. Պատարագը մատուցեցին Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Եււնին Զափլան Արքեպիսկոպոսը եւ Ղրպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոսը: Ծանօթ է, որ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Անթիլիաս կը գտնուէր ժողովական աշխատանքներու համար: Մեր Թեմի պատուիրակութիւնը կը գլխաւորէր Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Քոյր եկեղեցիներու հոգեւորականներ եւ աշակերտներ իրենց մայրենի լեզուներով Պատարագի երգեցողութեան մասնակցեցան: Աշակերտական հաւաքին նշանաբանը Քրիստոսաւանդ այն պատուիրանն էր, ուր կ'ըսուէր. «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով» (Ղուկաս 4:4):

Ասորի եկեղեցւոյ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Եււնին Զափլան քարոզի բնաբան առած էր Յիսուսի քառասնօրեայ պահեցողութենէն եւ սատանայէն փորձուելու ընթացքին արտասանած անտարանական խօսքէն, թէ «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով»: Սրբազանը աշակերտներուն թելադրեց տեղի չտալ չարին առջեւ, այլ բարիով եւ Աստուծոյ խօսքերով դէմ դնել չարին: Ան յիշեցուց, որ Քրիստոս ինչպէս յաղթանակեց, երբ սատանան Յիսուսի անօթութենէն եւ տկարութենէն օգտուելով՝ ջանաց խաբել մեր Տէրը: Որպէս Կիրակնօրեայ դպրոցի

աշակերտներ, տարուելու չենք մեր շրջապատի յոռի եւ աշխարհիկ մոլորութիւններէն: Թէեւ հացը եւ նիւթական կարիքները անհրաժեշտ են մեր ֆիզիքական գոյութեան պահպանման եւ բարեկեցիկ կեանքի ապահովման համար, սակայն հացէն աւելի կարեւոր են Աստուծմէ մեզի տրուած շնորհքները եւ առաքիւնութիւնները, այսինքն քրիստոնեական եւ բարոյական բոլոր այն արժէքները, որոնք աստուածահաճոյ են եւ մեր հոգիներու փրկութիւնը կ'ապահովեն:

Ղըպտի եկեղեցւոյ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոս ամփոփ կերպով բացատրեց թէ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիները ինչո՞ւ նոյնադաւան քոյր եկեղեցիներ են եւ թէ՛ պատմական, վկայաբանական ու աստուածաբանական ի՛նչ հարուստ ժառանգութիւն ունեցած են, իսկ այսօր, ինչո՞ւ անհրաժեշտ է անոնց գործակցութիւնը: Ապա ան օրուան խորհուրդէն բխած աշակերտներու հարցումներով զարգացուց հոգեխահ զրոյց մը:

Ս. Պատարագի ընթացքին, աշակերտներ Ս. Զաղորդութիւն ստացան:

Հաւաքական խմբանկարէ եւ ճաշէ ետք, շուրջ երկու հարիւր յիսուն աշակերտներ, տարիքի համաձայն, բաժնուեցան խումբերու եւ վարիչ-ուսուցիչներու առաջնորդութեամբ տեղի ունեցաւ սուրբ գրային մրցում Ղուկաս Աւետարանի 1-12 գլուխներուն վրայ: Յաղթական խումբեր ստացան բաժակներ, իսկ մրցումին մասնակցող աշակերտներ՝ աւետարանական համարներէ կազմուած գնահատանքի ապարանջան:

Միօրեայ դաստիարակչական հաւաքի աւարտին, աշակերտներ, դաստիարակ ուսուցիչ-ուսուցչուհիներ, քրիստոնեական հաւատքի եւ հաւաքական կեանքի օրինակելի մթնոլորտի մէջ փոխադարձ փորձառութիւններով հարստացած՝ գոհունակ սրտով վերադարձան իրենց շրջանները:

## **ORIENTAL ORTHODOX SUNDAY SCHOOLS' 6<sup>TH</sup> ANNUAL GATHERING**

Under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops, on Sunday, November 21<sup>st</sup>, 2009, the 6<sup>th</sup> annual Oriental Orthodox Sunday Schools' gathering took place at St. Ephraim Syriac Orthodox Church in Burbank. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who is a member of the Council, was at the time in Lebanon to participate in meetings at the Catholicosate. Our Prelacy's delegation was lead by Very Rev. Fr. Muron Aznikian.

The day began with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, (Syriac Orthodox Church) and H.G. Bishop Serapion (Coptic Orthodox Church). The students participated in the service in their respective languages. Archbishop Kaplan delivered the sermon on the following passage from the Gospel of Luke, "Man shall not live by bread alone, but by every word of God" (Luke 4:4). Bishop Serapion then explained to the students what makes the Armenian, Coptic, and Syriac Churches sister churches and how important collaboration between the churches is. A question

and answer session and discussion followed. The participants also received Holy Communion.

After lunch, the students, numbering close to 250, were assigned to groups for the Bible competition on Luke chapters 1-12. Winners were awarded with trophies and all the students were given mementos to commend their participation.